ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/60, 09.08.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Տիգվան» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» բաց մրցույթ

Գնման առարկան՝ Զանազան պահեստամասերի (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զանազան պահեստամասեր (Իեժեեերական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել և չեղյալ համարել հանձնաժողովի նիստի «Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ՍՁ-ի հետ) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու թիվ 7 արձանագրության առ 01 օգոստոսի 2019թ. 1.2 կետով որոշմամբ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու որոշումը և կասեցնել 2019թ. օգոստոսի 1-ի թիվ 7 արձանագրության 1.3 կետով «Սլացք» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոքարկող՝

<<Տիգվան>> ՍՊԸ

ՀՎՀՀ 04427695

Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ,Գեղանիստ գ.,26փ. 14տ.

Էլ.փոստ՝ tigvan@inbox.ru, հեռախոսահամար՝ 055 90 09 99

<<Ամերիաբանկ>> ՓԲԸ

Հ/հ 1570028193630100

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան բագրևանդի 5 հասցեում

հեռախոսահամար՝ 010-29-44-18

Էլ.փոստ՝ g.gevorgyan@mil.am

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման Նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/ 3» ծածկագրով բաց մրցույթ

<<09>> Օգոստոսի 2019թ.

ԲՈՂՈՔ

Պատվիրատուն իր կարիքների համար հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման Նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 15.05.2019թ.:

Ընթացակարգին հայտ են ներկայացրել «Սլացք» ՓԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) ՍամվելՏեր-Կարապետյան ԱՁ-ի հետ), «Տիգվան» ՍՊԸ-ն և <<Ռիմկ-ավտո>> ՍՊԸ-ն:

Մրցույթային հանձնաժողովի 11.07.2019թ.ին Ժամը 11.00-ին կայացած ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6-ի թիվ 4.2 որոշմամբ ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սլացք» ՓԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) ՍամվելՏեր-Կարապետյան ԱՁ-ի հետ) և առաջարկվել է ներկայացնել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:**

Թիվ 7 արձանագրությամբ առ 19.07.2019թ.-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատել է «Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱՁ-ի հետ) ուղարկված փաստաթղթերը պատշաճ և 1.3 կետով անգործություն ժամկետի ավարտից հետո հրավիրել պայմանագիր կնքելու:

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՄ N U-36137-1
5 «09» 08 2019թ.

Սակայն մենք ուսումնասիրելով «Սլացք» ՓԲԸ-ին (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱՁ -ի հետ) կողմից ներկայացրած որակավորման փաստաթղթերը գտնում ենք որ չի համապատասխանում հրավերի պահանջներին քանի որ.

1. Հաշիվ ապրանքագրերի վրա նշված չէ պայմանագրի ծածկագիրը և կնքման ամսաթիվը: Դրանից կարող ենք ենթադրել որ հաշիվ ապրանքագրերը դուրս են գրվել մինչև պայմանագիր կնքելը և նշված հաշիվ ապրանքագրերով կարող կնքված լինել մի քանի տարբեր ծածկագրով պայմանագրեր:

2. Թիվ 1 պայմանագրում հստակ նշված է պայմանագրի գինը՝ 32 000 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե առավելագույն գումարը, բայց մատակարարվել է ընդհանուր 31 021 984 ՀՀ դրամի ապրանքներ, ստացվում է որ պայմանագիրը ամբողջությամբ կատարված չէ: Ինչպես նաև պայմանագրում հստակ նշված չէ ապրանքների անվանումը, մատակարարման ժամկետը, միավորի արժեքը և ընդհանուր ծավալը: Այսպիսով պարզ է դառնում, որ պայմանագիրը կազմվել և կնքվել բազմաթիվ թերություններով նախկինում դուրս գրված հաշիվ ապրանքագրերի հիման վրա, այս մրցույթին մասնակցելու համար:

3. Պայմանագրերի ընդհանուր գումարը չի բավարարում մրցույթով անհրաժեշտ գումարի չափին:

Ուստի գտնում եմ, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ, համաձայն որի՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից **զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման Նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել և չեղյալ համարել հանձնաժողովի նիստի** «Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱՁ -ի հետ) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու՝ թիվ 7 արձանագրության առ 01 օգոստոսի 2019թ. 1.2 կետով որոշմամբ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու որոշումը և կասեցնել 2019թ. օգոստոսի 1-ի թիվ 7 արձանագրության 1.3 կետով «Սլացք» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները

Կից ներկայացվում է պետական տուրքի վճարման անդորրագիրը

Առդիր 7 էջ

Կանխավ շնորհակալություն

Հարգանքներով՝

<<Տիգվան>> ՍՊԸ տնօրեն Հ. Մկրտչյան